

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է Նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության հետևյալ կրտսեր թափուր պաշտոնն զբաղեցնելու մասին

Արտաքին կապերի վարչության միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության բաժնի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 30-4.1-78)

Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է միջազգային կառույցների և կազմակերպությունների հետ Նախարարության համագործակցության գործընթացին, միջազգային համագործակցության ուղղությամբ տարվող աշխատանքների վերլուծության գործընթացին, արտասահմանյան գործուղումների հետ կապված փաստաթղթերի կազմման աշխատանքներին: Իրականացնում է արտասահմանյան գործուղումների վերաբերյալ հաշվետվությունների հավաքագրման աշխատանքները, ինչպես նաև Բաժնի առջև դրված գործառույթներից ու խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության ու արխիվացման աշխատանքները, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն,
- սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի 2-րդ ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
- անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1, 2):

Դիմող ՀՀ քաղաքացիները Նախարարություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- գրավոր դիմում (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),

- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
- աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագրի պատճենը՝ բնօրինակի հետ,
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի,
- անձնագիր և անձնագրի պատճենը:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև 12:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 07.02.2018թ.: